# ԽԱՉԱԿՐԱՑ ԱՂՈԹՔՆԵՐ

## Աղոթքը կարող է փրկել և կփրկի մարդկությանը

ընտրված էջեր: 1-5, 7, 11-12, 16-18, 21, 25-27, 37, 39-42, 56, 72-73, 78, 96, 103, 115, 123, 158, 179, 192, 200, 233, 235, 237, 244, 245, 247, 251, 269, 271

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԸ

Խաչակրաց աղոթքներ: Աղոթագիրք

Ճշմարտության Գիրքը: Ընտրված Պատգամներ

Հատոր 1.
8 նոյեմբերի, 2010թ. – 4 հունվարի, 2012թ.

Հատոր 2.
7 հունվարի, 2012թ. – 4 սեպտեմբերի, 2012թ.

Հատոր 3.
5 սեպտեմբերի, 2012թ. – 6 հունիսի, 2013թ.

Հատոր 4.
7 հունիսի, 2013թ. – 31 մարտի, 2014թ.

Հատոր 5.
1 ապրիլի, 2014թ. – 6 մայիսի, 2015թ.

# ԽԱՉԱԿՐԱՑ ԱՂՈԹՔՆԵՐ
## ԱՂՈԹԱԳԻՐՔ

**Բոլոր խաչակրաց աղոթքները**
**խնդրական աղոթքները**
**և այլ աղոթքներ**

Տրված՝ Մարիա
Աստվածային Գթասրտության
«Հիսուս՝ մարդկության»
մնացորդաց բանակի համար

Վարշավա 2016

Բնագիր հրատարակության վերնագիրը.
*The Crusade of Prayer* by Maria Divine Mercy

Fundacja pro Maria et Veritate
Al. Jerozolimskie 85 lok. 21
02-001 Warszawa

Copyright © Maria Divine Mercy 2016
Translation by the publisher and translators.

Թարգմանիչները և հրատարակիչները
ցանկանում են մնալ անանուն:
Այս գիրքը Աստծո Փառքի համար է:

ISBN 978-83-946120-1-6

Նվիրվում է Տիրամորը՝
Փրկության Մորը

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աղոթագրքի մասին ........................................ 21
Հրահանգներ աղոթախմբերի համար ............... 25
Կարևոր նշումներ........................................ 33
Խաչակրաց աղոթք 96 .................................. 35

## ԽԱՉԱԿՐԱՑ ԱՂՈԹՔՆԵՐ

1. Իմ ընծան Հիսուսին՝ հոգիներ փրկելու համար........................................ 39
2. Աղոթք համաշխարհային առաջնորդների համար ............................ 40
3. Աշխարհը վախից ազատելու համար............ 41
4. Բոլոր ընտանիքների միավորման համար... 41
5. Փառաբանություն Ամենաբարձրյալ Աստծուն ................................................ 42
6. Հակաքրիստոսին կանգնեցնելու համար...... 43
7. Աղոթք նրանց համար, ովքեր մերժում են Գթասրտությունը ................................. 44
8. Խոստովանությունը ................................. 45
9. Տառապանքի առաջարկումը որպես ընծա... 46
10. Տանելու համար Քո Սիրո Բոցը ................ 47
11. Տեսանողների հանդեպ ատելությունը դադարեցնելու համար ........ 48

60. Աղոթք՝ Նախազգուշացման ընթացքում ընտանիքների դարձի գալու համար ........................................ 103
61. Մեկ համաշխարհային վերահսկողությունից խուսափելու համար ........................................ 104
62. Կորած և անօգնական հոգիների համար ........................................ 105
63. Պահպանիր ինձ այս ճամփորդության ընթացքում ........................................ 106
64. Փրկիր իմ եղբայրներին և քույրերին ........................................ 107
65. Մահացու մեղքի մեջ գտնվողների համար ........................................ 108
66. Հոգևորականների համար. Օգնիր ինձ մնալ հավատարիմ Քո Ամենասուրբ Խոսքին ........................................ 109
67. Պահիր իմ երեխաներին ապահով ստերի թագավորից ........................................ 110
68. Պաշտպանիր ինձ սատանայի ազդեցությունից ........................................ 111
69. Աղոթք Հայր Աստծուն Նրա Աստվածային Կամքն ընդունելու համար ........................................ 112
70. Աղոթք հոգևորականների համար, որ հաստատուն և հավատարիմ մնան Աստծո Սուրբ Խոսքին ........................................ 113
71. Աղոթք՝ մեզ հալածանքից պաշտպանելու համար ........................................ 115
72. Աշակերտի աղոթքը ........................................ 116
73. Երիտասարդ հոգիների համար, երիտասարդ երեխաների համար ........................................ 117

74. Զանազանության ընծայի համար .............. 118
75. Ես Քեզ եմ տալիս իմ ցավը, Հիսուս ........... 119
76. Աթեիստի աղոթքը ......................................... 121
77. Մեծ Բրիտանիայի համար............................ 122
78. Փրկիր ինձ չարից.......................................... 123
79. Երկու միլիարդ կորած հոգիների համար. 124
80. Նրանց հոգիների համար, ովքեր
մարդասպանություն են գործում ............... 125
81. Սուրբ Հաղորդության Ընծայի համար....... 126
82. Մնացորդ Եկեղեցու հաղթանակի
համար ........................................................ 127
83. Երկնային պատիժների մեղմացման
համար ........................................................ 129
84. Աշխարհը ղեկավարող էլիտայի
հոգիների լուսավորման համար................ 131
85. Ամերիկայի Միացյալ Նահագները
խաբեբայից փրկելու համար ..................... 132
86. Ազատիր ինձ կասկածի տառապանքից.... 133
87. Պաշտպանիր մեր ազգը չարից ................... 134
88. Հոգիների համար՝
Նախազգուշացումից հետո........................ 135
89. Թշվառ մեղավորների համար..................... 136
90. Շնորհակալություն Քո
Ամենափառավոր Երկրորդ
Գալուստի համար ...................................... 137
91. Պահիր ինձ հավատարիմ իմ
հավատքի հանդեպ...................................... 138
92. Տոկունության շնորհի համար..................... 139
93. Ապաշխարության արցունքների համար . 140

147. Հայր Աստված, ցույց տուր Գթասրտություն նրանց, ովքեր մերժում են Քո Որդուն ................................ 202
148. Արի ինձ օգնության ..................................... 203
149. Աստծո Սերը Փնտրելու համար................ 204
150. փրկելու համար չհավատացողների հոգիները ................................................ 205
151. Պաշտպանել հավատը ............................... 206
152. Օգնիր ինձ իմ անօգնականության ժամին....................................................... 207
153. Պաշտպանության Ընծան երեխաների համար..................................... 208
154. Փրկության Մոր տոնի օրվա աղոթք ........ 210
155. Փրկության Առաքելության պաշտպանության համար ........................ 211
156. Պաշտպանություն ատելությունից .......... 213
157. Գերության մեջ գտնվող հոգիների համար ....................................................... 214
158. Պաշտպանիր ինձ մեկ համաշխարհային կրոնից.......................... 215
159. Աղերս՝ Աստծո Սերը ստանալու համար ....................................................... 217
160. Օգնիր ինձ ավելի շատ սիրել Քեզ ............ 218
161. Վստահության և խաղաղության համար ....................................................... 219
162. Թույլերին և անմեղներին պաշտպանելու համար............................... 220
163. Փրկիր ինձ հալածանքից............................ 221
164. Խաղաղության աղոթք ազգերի համար... 223

165. Հավիտենական Կյանքի Ընծայի
համար ........................................................... 225
166. Անմեղ մարդկանց սպանությունները
նվազեցնելու համար ..................................... 226
167. Պաշտպանիր իմ ընտանիքը...................... 227
168. Աստծո Սիրո Ընծայի համար .................... 228
169. Նրանց փրկության համար, ովքեր
մերժում են Քրիստոսին............................... 229
170. Վեր պահելու համար Աստծո
Սուրբ Խոսքը................................................. 230

## ԽՆԴՐԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

I. Պաշտպանություն կեղծ մարգարեից ........... 235
II. Իմունիտետի Շնորհի համար....................... 237
III. Պաշտպանել Աստծո Խոսքը....................... 239
IV. Հայր Աստծո պատիժը մեղմացնելու
համար ................................................................ 241
V. Մահացու մեղքի մեջ գտնվողների
փրկության համար............................................. 243
VI. Շնորհների Ընծան.......................................... 244

## ԱՅԼ ԱՂՈԹՔՆԵՐ

Աղոթք՝ փրկության համար ................................ 247
Բացեք ձեր աչքերը և խոսեք Ինձ հետ
(աթեիստի աղոթքը) ............................................ 247
Աղոթք չհավատացողների համար,
ովքեր ծիծաղում են, ծաղրում կամ
բացահայտ արհամարհում նրանց,
ովքեր աղոթում են ............................................. 248

Աղոթք՝ որպեսզի Հիսուսը բացահայտի
ձեզ Իր Ներկայությունը .......................................... 248
Աղոթք՝ անմիջապես ներողություն
ստանալու համար ................................................ 249
Աղոթք՝ ուրիշներին դարձի բերելու համար .... 249
Աղոթք խրախուսանքի համար ............................ 250
Աղոթք ամեն օրվա համար ................................. 251
Բացեք ձեր սրտերը՝ ստանալու համար
Հիսուսի Խոսքերը
(Աղոթք, որ կարողանանք տեսնել որ
այս Պատգամներն Աստվածային
ծագում ունեն) ...................................................... 252
Աղոթք՝ մտահոգություններից
ազատվելու համար .............................................. 253
Խեղճ և ամոթահար հոգու աղոթքը .................. 253
Աղոթք՝ Աստծո Ուղու վրա հարատևելու
համար, երբ ուրիշները փորձում են
կանգնեցնել մեզ .................................................. 254
Աղոթք կույր հոգիների համար, ովքեր
կորած են ............................................................. 255
Աղոթք՝ դիմակայելու համար գալիք
պղծությանը .......................................................... 256
Աղոթք՝ լուսավորման համար այս
ժամանակ
(աղոթք լուսավորման ընծայի համար) ........... 257
Աղոթքի խնդրանք Հայր Աստծուց
(միավորվեք աղոթքի մեջ) ................................. 257
Աղոթք՝ խուսափելու համար
հալածանքի հանգամանքներից, որը
նյութվում է փակ դռների ետևում ..................... 258

# ԱՂՈԹԱԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Այս գրքում պարունակվող աղոթքները մարդկային ծագում չունեն և բացահայտում են Աստծո Աստվածային Պլանը մեռնող աշխարհին, ինչպես այն թելադրվել է մասնավոր լոկուցիաների միջոցով և պարունակվում է Ճշմարտության գրքի մեջ, այն ամենի մասին, որ տեղի է ունենալու մինչև Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը:

Ինչպես այն օրերին, երբ Հիսուսը ծնվեց, Աստված ուղարկեց Իր մարգարե Հովհաննես Մկրտչին «Տիրոջ ճանապարհը ուղղելու» և Իսրայելի ազգին զգուշացնելու, որ Մեսիայի վերաբերյալ Եսայու մարգարեությունները իրականանալու վրա են: Հովհաննեսի պատգամն այն էր, որ մարդիկ նախապատրաստվեին գալիք Մեսիայի համար ապաշխարության և հոգևոր մաքրագործման միջոցով:

Այսօր մեզ տրվում է նույն պատգամը. այս անգամ այն մասին, որ Մեսիան շուտով կվերադառնա, և որ մենք պետք է հոգևորապես պատրաստ լինենք: Այլապես մենք հանկարծակիի կգանք և կգտնենք մեզ մա-

# ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԱՂՈԹԱԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Հատվածներ Ճշմարտության գրքում պարունակվող Պատգամներից, որոնք ստացել է Մարիա Աստվածային Գթասրտությունը:

«Ես կմեղմացնեմ կանխասացված տառապանքի մեծ մասը Իմ Խաչակրաց աղոթախմբերի զորությամբ:

(...) Ես ցանկանում եմ հրահանգավորել Իմ խաչակրաց աղոթախմբերին զգոն լինել երբ դրանք ստեղծվում են նրանց ազգերի մեջ: Նրանք պետք է ունենան իրենց մոտ սուրբ ջուր, Իմ Խաչը և ասեն այս հատուկ խաչակրաց աղոթքը իրենց աղոթախումբը օրհնելու և պաշտպանելու համար»:

(Ուրբաթ, 25 հունվարի, 2013թ., ժ.20:00)

«Իմ սիրելի աղջիկ, պետք է հայտնի դարձվի, որ Ես ցանկանում եմ կազմել աղոթախմբերի բանակ աշխարհով մեկ: Ես կապահովեմ ձեզ, Իմ բանակ, աղոթքներով, որոնք պետք է ասվեն հոգիներ փրկելու

համար: Այդ աղոթախմբերը կծավալվեն և նրանց շարքերում կբարձրանա նվիրյալ հետևորդների մի ճշմարիտ բանակ՝ բերելու համար Իմ աստվածային խոստման ճշմարտությունը՝ փրկություն բոլորի համար:

Այդ խմբերը կկազմեն այն բանակը, ինչպես թելադրվել է Իմ սիրելի Հոր կողմից, որը կհաղթահարի սատանայի և նրան հավատացողների ու նրա հետևորդների կողմից ստեղծված չարի խավարը»:

(Կիրակի, 23 հոկտեմբերի, 2011թ, ժ 19:15)

«Այս աղոթքները գրվել են Երկնքում և խոստանում են արտակարգ Շնորհներ:

Նրանք միայն մեկ նպատակ ունեն, որը ամեն մեկի հոգու փրկությունն է՝ ամեն զավակի, ամեն հավատամքի, ամեն սեռի, ամեն կրոնական հարանվանության և աթեիստների: Սա է Իմ ամենամեծ ցանկությունը:

Դուք, Իմ աշակերտներ, Իմ ուղղորդության տակ եք: Շնորհները, որոնք Ես հեղում եմ ձեզ վրա, արդեն պտուղ են տալիս: Շուտով Խաչակրաց աղոթքների Շնորհների միջոցով Իմ տված զորությունը կգրավի հազարավոր նոր հոգիների:

Դուք կմտածեք, թե ինչպես կարող է մի փոքր աղոթախումբը հասնել այդպիսի դարձերի: Պատասխանը պարզ է: Դուք հաջողություն կունենաք այն պատճառով, որ

պաշտպանված եք Իմ Հոր կողմից և առաջնորդություն եք ստանում ուղղակիորեն Իմ կողմից: Դուք չեք կարող ձախողվել»:

(Կիրակի, 11 նոյեմբերի, 2012թ., ժ. 22:00)

«Համբերությունը, ամենօրյա լուռ աղոթքը, աղոթախմբերի կազմումը, Աստվածային Գթասրտության աղոթքի ամենօրյա ասելը (ցերեկվա ժ.3-ին ), պահեցողությունը և Իմ Միրելի Մոր համար ասված Սուրբ Վարդարանը, այս բոլորը համատեղված ծառայում են որպես հոգիների փրկության կատարյալ բանաձև»:

(Չորեքշաբթի, 10 օգոստոսի, 2011թ., ժ.23:00)

Ուղեցույց Աղոթախմբերի Համար

Առնվազն երկու հոգի պետք է հավաքված լինեն: Ժամանակի ընթացքում, հուսանք, շատերը կմիանան հոգիներ փրկելու այս Առաքելությանը: Դա կարող է արվել տներում կամ հանրային վայրերում, ուր թույլտվություն կունենաք հավաքվելու: Հնարավորության դեպքում այդ հավաքները պետք է լինեն պաշտամունքի տներում:

Մարդիկ պետք է հանդիպեն որքան հնարավոր է հաճախ: Նույնիսկ եթե պետք է սկսել շաբաթական մեկ կամ երկու անգամ, և ամեն անգամ տարբեր մարդիկ գան, եթե

# ԽԱՉԱԿՐԱՑ ԱՂՈԹՔՆԵՐ

*Խաչակրաց աղոթք 1*

## Իմ ընծան Հիսուսին՝ հոգիներ փրկելու համար

*Սովորաբար ասվում է ամեն օր.*

Իմ ամենաթանկագին Հիսուս, Դու, ով մեզ այնքան շատ է սիրում, թույլ տուր ինձ իմ խոնարհ ձևով օգնել փրկելու Քո թանկագին հոգիներին:

Գթա բոլոր մեղավորներին, անկախ նրանից, թե որքան ծանր են նրանք վիրավորել քեզ:

Թույլ տուր ինձ աղոթքի և տառապանքի միջոցով օգնել այն հոգիներին, որոնք չեն դիմանա Նախազգուշացմանը, որպեսզի տեղ փնտրեն Քո կողքին Քո Թագավորության մեջ: Լսիր իմ աղոթքը, ով քաղցր Հիսուս, օգնելու Քեզ գրավել այն հոգիներին, որոնց դու տենչում ես:

Ով Սուրբ Սիրտ Հիսուսի, ես իմ հավատարմությունն եմ խոստանում Քո Ամենասուրբ Կամքին միշտ:

Ամեն:

## Աղոթք համաշխարհային առաջնորդների համար

Իմ Հավիտենական Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, ես խնդրում եմ, որ Դու պաշտպանես Քո զավակներին այն հալածանքից, որը նյութվում է գլոբալ ուժերի կողմից անմեղ ազգերի դեմ:

Ես աղոթում եմ այն հոգիների մեղքերի թողության համար, ովքեր դժբախտության պատճառն են, որպեսզի նրանք կարողանան շրջվել դեպի Քեզ խոնարհ և զղջացող սրտերով:

Խնդրում եմ տուր քո տառապած զավակներին ուժ՝ դիմանալու համար այդպիսի տառապանքին հանուն՝ աշխարհի մեղքերի քավության Քրիստոսի՝ մեր Տիրոջ միջոցով:

Ամեն:

*Խաչակրաց աղոթք 3*

## Աշխարհը վախից ազատելու համար

Ով իմ Տեր Հիսուս Քրիստոս, ես աղերսում եմ Քեզ ազատել աշխարհը այն վախից, որը խլում է հոգիներին Քո սիրող Սրտից:

Ես աղոթում եմ, որ հոգիները, ովքեր իրական վախ կզգան Նախազգուշացման ընթացքում, կանգ առնեն և թույլ տան, որ Քո Գթասրտությունը հեղեղի իրենց հոգիները, որպեսզի նրանք ազատ լինեն սիրելու Քեզ այնպես, ինչպես պետք է սիրեն:

Ամեն:

*Խաչակրաց աղոթք 4*

## Բոլոր ընտանիքների միավորման համար

Միավորիր բոլոր ընտանիքները, Հիսուս, Նախազգուշացման ժամանակ, որպեսզի նրանք ստանան հավիտենական փրկություն:

Ես աղոթում եմ, որ բոլոր ընտանիքները մնան միասին Քեզ հետ միության մեջ, Հիսուս, որպեսզի նրանք ժառանգեն Երկրի վրա Նոր Դրախտը:

Ամեն:

*Խաչակրաց աղոթք 5*

## Փառաբանություն Ամենաբարձրյալ Աստծուն

*Հիսուս.* «Աղջիկս, աշխարհը պետք է առաջարկի այս հատուկ աղոթքը ի գովաբանություն և շնորհակալություն Հայր Աստծուն այն գթասրտության համար, որը նա ապահովում է ողջ աշխարհին».

Ով Հավիտենական Հայր, մենք առաջարկում ենք Քեզ մեր աղոթքները ուրախ շնորհակալությամբ Քո Գթասրտության թանկագին ընծայի համար՝ ողջ մարդկությանը:

Մենք ուրախանում ենք և առաջարկում ենք Քեզ՝ Ամենափառապանծ Թագավոր, մեր գովաբանությունն ու պաշտամունքը Քո սիրող և քնքուշ գթասրտության համար:

Դու, Ամենաբարձրյալ Աստված, մեր Թագավորն ես, և այս ընծայի համար, որը Դու հիմա բերում ես մեզ, մենք ընկնում ենք Քո ոտքերի առջև խոնարհ ծառայությամբ:

Խնդրում ենք, Աստված, գթա Քո բոլոր զավակներին:

Ամեն:

## Աղոթք երիտասարդների համար

Մայր Փրկության, ես խնդրում եմ Քեզ աղոթել գթասրտության համար

երիտասարդ հոգիների հանդեպ, ովքեր սարսափելի խավարի մեջ են, որպեսզի նրանք ճանաչեն Քո սիրելի Որդուն, երբ Նա գա ազատելու համար ողջ մարդկությանը:

Թող ոչ մի հոգի չընկնի ճանապարհից դուրս:

Թող ոչ մի հոգի չմերժի Նրա Մեծ Գթասրտությունը:

Ես աղոթում եմ, Մայր, որ բոլորը փրկվեն, և խնդրում եմ Քեզ ծածկել այդ հոգիներին Քո Սուրբ Թիկնոցով՝

Ապահովելու համար նրանց այն պաշտպանությունը խաբեբայից, որի կարիքը նրանք ունեն:

Ամեն:

*Խաչակրաց աղոթք 33*

## Կենդանի Աստծո Կնիքի աղոթքը

*Հայր Աստված.* «Իմ Կնիքը ճանաչելու և այն սիրով, ուրախությամբ և երախտագիտությամբ ընդունելու համար»:

*Հայր Աստված խնդրում է, որ բոլորն ընդունեն այս Կնիքը՝ որպես Պաշտպանություն մեզնից յուրաքանչյուրի և ամեն մեկի ու մեր ընտանիքների համար դեպի Քրիստոսի Երկրորդ Գալուստը տանող ժամանակահատվածի ընթացքում:*

*Հիսուս.* «Ես ցանկանում եմ հիմա, որ ձեզանից յուրաքանչյուրն այսօրվանից, և ամեն օր սրանից հետո, ասի խաչակրաց աղոթք 33-ը, և որ պահեք Կենդանի Աստծո Կնիքի պատճենը ձեզնից մոտիկ»:

Ով Աստված իմ, Իմ սիրող Հայր, ես սիրով և երախտագիտությամբ ընդունում եմ Քո Աստվածային Պաշտպանության Կնիքը:

Քո Աստվածայնությունը ներառում է իմ մարմինն ու հոգին հավերժությունը:

Ես խոնարհվում եմ խոնարհ շնորհակալությամբ և առաջարկում Քեզ իմ խորը սերն ու հավատարմությունը Քեզ՝ իմ Սիրելի Հայր:

Ես խնդրում եմ Քեզ պաշտպանել ինձ և իմ սիրելիներին այդ հատուկ Կնիքով և ես իմ կյանքն եմ նվիրում Քո ծառայությանն ընդմիշտ:

Ես սիրում եմ Քեզ սիրելի Հայր:

Ես սփոփում եմ Քեզ այս ժամանակներում սիրելի Հայր:

Ես առաջարկում եմ Քեզ Քո սիրելի Որդու Մարմինը, Արյունը, Հոգին և Աստվածայնությունը աշխարհի մեղքերի քավության և Քո բոլոր զավակների փրկության համար:

Ամեն:

# Փրկության աղոթք կաթոլիկ եկեղեցու համար

Ով Օրհնյալ Մայր Փրկության, խնդրում եմ, աղոթիր կաթոլիկ եկեղեցու համար այս դժվարին ժամանակներում, և մեր սիրելի Բենեդիկտ XVI Պապի համար՝ թեթևացնելու նրա տառապանքը:

Մենք խնդրում ենք Քեզ, Մայր Փրկության, որ ծածկես Աստծո Սրբազան սպասավորներին Քո Սուրբ Թիկնոցով, որպեսզի նրանց տրվի ուժեղ, հավատարիմ և քաջ լինելու շնորհները այն փորձությունների ընթացքում, որոնց կդիմակայեն:

Աղոթիր նաև, որ նրանք հոգ տանեն իրենց հոտին Կաթոլիկ Եկեղեցու ճշմարիտ ուսուցումներին համապատասխան:

Ով Աստծո Սուրբ Մայր, տուր մեզ՝ երկրի վրա քո մնացորդ եկեղեցուն, առաջնորդության ընծան, որպեսզի մենք կարողանանք առաջնորդել՝ հոգիներ փրկելու դեպի Քո Որդու Թագավորություն:

Մենք խնդրում ենք Քեզ, Մայր Փրկության, որ հեռու պահես խաբեբային Քո Որդու հետևորդներից, որ նրանց որոնումների մեջ

*Խաչակրաց աղոթք 54*

## Աղոթք՝ Հորը, թուլացնելու համար երրորդ համաշխարհային պատերազմի ազդեցությունը

Ով Երկնավոր Հայր, հանուն Քո սիրելի Որդի Հիսուս Քրիստոսի, Ով մեծապես տառապեց մարդկության մեղքերի համար, խնդրում եմ, օգնիր մեզ այս դժվարին ժամանակներում, որին դիմակայում ենք:

Օգնիր մեզ դիմանալ այն հալածանքին, որը պլանավորվում է ագահ ղեկավարների և նրանց կողմից, ովքեր ցանկանում են ոչնչացնել Քո եկեղեցիներն ու Քո զավակներին:

Մենք աղերսում ենք Քեզ, սիրելի Հայր, օգնել մեզ կերակրելու մեր ընտանիքները և փրկելու նրանց կյանքը, ովքեր կպարտադրվեն պատերզամի իրենց կամքին հակառակ:

Մենք սիրում ենք Քեզ՝ սիրելի Հայր: Մենք խնդրում ենք Քեզ օգնել մեզ կարիքի ժամանակ: Փրկիր մեզ հակաքրիստոսի ճանկից: Օգնիր մեզ դիմադրելու այդ նշանին՝ գազանի նշանին, այն ընդունելը մերժելու միջոցով:

## Աղոթք՝ Նախազգուշացման ընթացքում ընտանիքների դարձի գալու համար

*Հիսուս.* «Աստծո զավակներ, ամեն օր նախապատրաստվեք Նախազգուշացման համար, ասես թե այն կարող է պատահել ցանկացած ժամանակ»:

Ով սիրելի քաղցր Հիսուս, ես Գթասրտություն եմ խնդրում իմ ընտանիքի հոգիների համար (*նշեք անունները*): Ես առաջարկում եմ Քեզ իմ տառապանքները, իմ փորձություններն ու աղոթքները՝ փրկելու համար նրանց հոգիները խավարի ոգուց:

Թող Քո այս զավակներից ոչ մեկը չմերժի Քեզ, ոչ էլ Գթասրտության Քո Ձեռքը:

Բաց նրանց սրտերը, որ միահյուսվեն Քո Սուրբ Սրտին, որպեսզի կարողանան փնտրել ներումը, որն անհրաժեշտ է նրանց փրկելու համար Դժոխքի կրակներից:

Տուր նրանց հնարավորությունը՝ հատուցումներ կատարելու, որպեսզի կարողանան դարձի գալ Քո Աստվածային Գթասրության Ճառագայթների հետ:

Ամեն:

## Աղոթք՝ մեզ հալածանքից պաշտպանելու համար

Ով Հիսուս, փրկիր Աստծո զավակներին Հակաքրիստոսից:

Պաշտպանիր մեզ երկիրը վերահսկելու պլաններից:

Տեր, փրկիր մեզ հալածանքից:

Պաշտպանիր խավար հոգիներին հակաքրիստոսից, որպեսզի նրանք կարողանան ազատագրվել Քո Աչքում:

Օգնիր մեզ մեր թուլության մեջ:

Ուժեղացրու մեզ հոգով՝ բարձրանալու և առաջնորդելու մեկս մյուսին, մինչ առաջ ենք քայլում Քո բանակում դեպի Դրախտի Դարպասները:

Ես Քո կարիքն ունեմ սիրելի Հիսուս:

Ես սիրում եմ Քեզ սիրելի Հիսուս:

Ես Փառաբանում եմ Քո Ներկայությունը երկրի վրա:

Ես խուսափում եմ խավարից:

Ես պաշտում են Քեզ և հանձնվում մարմնով և հոգով, որպեսզի կարողանաս

## Փրկիր ինձ չարից

Ով Հիսուս, պաշտպանիր ինձ Սատանայի ուժից: Տար ինձ Քո Սրտի մեջ, մինչ ես բաց եմ թողնում նրա ու նրա չար ուղիների հանդեպ ունեցած իմ ողջ նվիրվածությունը:

Ես թողնում եմ իմ կամքը և գալիս Քո առջև ծնկի եկած, խոնարհ և զղջացող սրտով:

Ես թողնում եմ իմ կյանքը Քո Սուրբ Բազուկների մեջ: Փրկիր ինձ չարից: Ազատիր ինձ և տար ինձ Քո պաշտպանության ապահով ապաստանը հիմա և հավիտյան:

Ամեն:

## Վստահության Ընծայի համար

Ով իմ սիրելի Հիսուս,

Օգնիր ինձ վստահել Քեզ:

Վստահել Քո Խոստումին, որ նորից կգաս:

Ընդունել Քո Երկրորդ Գալուստի Ճշմարտությունը:

Վստահել Հայր Աստծո Խոստումին, երբ Նա ասաց, որ կտա Քեզ Քո Թագավորությունը:

Օգնիր ինձ վստահել Քո Ուսուցումներին, աշխարհը փրկելու Քո Պլանին:

Օգնիր ինձ ընդունել, Շնորհով, Քո Ընծաները:

Օգնիր ինձ վստահել Քեզ, որ կորցնեմ իմ վախը և կարողանամ թույլ տալ, որ Քո Սերը ողողի իմ սիրտն ու հոգին:

Ամեն:

## Բոլոր հոգիներին հավաքելու և միավորելու համար

Սիրելի Հիսուս, օգնիր մեզ՝ Քո սիրող աշակերտներին հավաքելու աշխարհը Քո Բազուկների մեջ և Քեզ ներկայացնելու այն հոգիներին, ովքեր ամենաշատն ունեն Քո Մեծ Գթասրտության կարիքը:

Զորացրու մեզ Սուրբ Հոգու Ընծայով՝ ապահովելու որպեսզի Ճշմարտության Բոցը հեղեղի բոլոր նրանց, ովքեր առանձնացել են Քեզնից:

Միավորիր բոլոր մեղավորներին, որպեսզի յուրաքանչյուրին տրվի հաշտության ամեն մի հնարավորություն:

Տուր մեզ բոլորիս զորությունը հաստատուն մնալ Քո Սուրբ Խոսքի հանդեպ, երբ մեզ կստիպեն մերժել Ճշմարտությունը, որը հռչակվել է աշխարհին Ամենասուրբ Կտակարանների միջոցով:

Մենք մնում ենք Քո մեջ, Քեզ հետ և Քեզ համար, դեպի փրկություն տանող մեր այդ ճամփորդության յուրաքանչյուր քայլափոխի:

Ամեն:

*Խաչակրաց աղոթք 139*

## Չարին պարտության մատնելու զորության համար

Սիրելի Հիսուս, պաշտպանիր ինձ դևի չարությունից:

Ծածկիր ինձ և բոլոր նրանց, ովքեր թույլ և անպաշտպան են նրա ներկայությամբ:

Տուր ինձ արիությունը՝ մերժելու նրան և օգնիր ինձ խուսափել նրա կողմից ինձ վեճի մեջ գրավելու ցանկացած փորձից, ամեն օր:

Ամեն:

## Լցրու ինձ Քո Սիրո Ընծայով

Սիրելի Հիսուս, լցրու ինձ՝ մի դատարկ անոթի, Քո Սիրո Ընծայով:

Հեղեղիր իմ հոգին Քո Ներկայությամբ: Օգնիր ինձ սիրել ուրիշներին ինչպես Դու ես ինձ սիրում:

Օգնիր ինձ լինել Քո Խաղաղության, Քո Հանդարտության և Քո Գթասրտության անոթ:

Միշտ բաց իմ սիրտը ուրիշների հոգսերի հանդեպ, և տուր ինձ Շնորհը՝ ներելու նրանց, ովքեր մերժում են Քեզ և մեղանչում են իմ դեմ:

Օգնիր ինձ հռչակել Քո Սերը օրինակի միջոցով, ինչպես որ Դու կանեիր, եթե լինեիր իմ փոխարեն:

Ամեն:

# ԽՆԴՐԱԿԱՆ ԱՂՈԹՔՆԵՐ

## Պաշտպանություն կեղծ մարգարեից

*Հիսուս.* «Ես ցանկանում եմ որ բոլորդ սկսեք խնդրական աղոթքների մի նոր շարք կեղծ մարգարեից պաշտպանվելու համար, և ասեք այդ աղոթքները օրական մեկ անգամ այժմվանից սկսած»։

Թանկագին Հիսուս, փրկիր մեզ կեղծ մարգարեի խաբեությունից։

Հիսուս գթա մեզ։

Հիսուս փրկիր մեզ հալածանքից։

Հիսուս պահպանիր մեզ Հակաքրիստոսից։

Տեր գթա։

Քրիստոս գթա։

Թանկագին Հիսուս ծածկիր մեզ Քո Թանկագին Արյամբ։

Թանկագին Հիսուս բաց մեր աչքերը Կեղծ Մարգարեի ստերի հանդեպ։

Թանկագին Հիսուս միավորիր Քո Եկեղեցին։

Հիսուս պաշտպանիր մեր սրբությունները։

Հիսուս թույլ մի տուր որ Կեղծ Մարգարեն բաժանի Քո Եկեղեցին։

*Խնդրական աղոթք II*

## Իմունիտետի Շնորհի համար

*Հիսուս.* «Եկեք Իմ Հոր մոտ, Իմ սիրելի աշակերտներ, և շնորհակալություն հայտնեք Իմ Հորը դժոխքի կրակների հանդեպ Նրա Իմունիտետի Շնորհի Ընծայի համար՝ տրված նրանց, ովքեր պատասխանում են Նրա Կոչին»։

Ով Ամենաբարձրյալ Երկնավոր Հայր,

Ես սիրում եմ Քեզ։ Ես պատվում եմ Քեզ։

Տե՛ր, գթա՛։

Տե՛ր, ներիր մեզ մեր հանցանքները։

Ես պաշտում եմ Քեզ։

Ես փառաբանում եմ Քեզ։

Ես Քեզ շնորհակալություն եմ հայտնում Քո բոլոր յուրահատուկ Շնորհների համար։

Ես Քեզնից աղերսում եմ իմունիտետի շնորհը իմ սիրելիների համար (*թվարկեք բոլոր նրանց անունները հոգիների փրկության համար*)։

Ես առաջարկում եմ Քեզ իմ հավատարմությունը միշտ։

*Խնդրական աղոթք VI*

## Շնորհների Ընծան

*Հիսուս.* «Այն հոգիներին, ովքեր կասեն սա հալածանքի ժամանակ. Իմացեք, որ Ես կհեղեմ այդ Շնորհները ձեզ վրա: Դուք կդառնաք ավելի հանդարտ,ավելի ուժեղ և ավելի խիզախ, մինչ կտանեք Իմ ծանր Խաչը դեպի Նոր Երկնքի և Նոր Երկրի դարպասները: Ամենակարևորը, դուք տեղի չեք տա այն ճնշումներին, որոնց ստիպված կլինեք դիմակայել Իմ Սուրբ Անվամբ»:

Ով թանկագին Հիսուս, իմ սիրող Փրկիչ,

Լցրու ինձ Քո Սիրով,

Լցրու ինձ Քո Զորությամբ,

Լցրու ինձ Քո Իմաստությամբ,

Լցրու ինձ Քո Տոկունությամբ,

Լցրու ինձ Քո Խոնարհությամբ,

Լցրու ինձ Քո Խիզախությամբ,

Լցրու ինձ Քո Տառապանքով:

Ամեն:

# ԱՅԼ ԱՂՈԹՔՆԵՐ

## Աղոթք՝ փրկության համար

Ով Տեր իմ, առաջնորդիր ինձ Քո Թագավորություն և պաշտպանիր ինձ այն խավարից, որը ողողել է հոգիս:

Լսիր ինձ հիմա, ով Սուրբ Սիրտ, և Քո բարությամբ թող Քո սիրո և պաշտպանության Լույսը փայլի:

Ամեն:

## Բացեք ձեր աչքերը և խոսեք Ինձ հետ (աթեիստի աղոթքը)

Աստված, եթե Դու Ճշմարտությունն ես, բացահայտիր ինձ Քո Սիրո նշանը:

Բաց իմ սիրտը, որ առաջնորդություն ստանամ:

Եթե Դու Գոյություն ունես, թույլ տուր ինձ զգալ Քո Սերը, որ կարողանամ տեսնել Ճշմարտությունը:

Աղոթիր ինձ համար հիմա:

Ամեն:

## Աղոթք ամեն օրվա համար

*Հիսուս.* «Ես սիրում և փայփայում եմ ձեզնից յուրաքանչյուրին, զավակներս: Երբեք մի մոռացեք դա, երբ աղոթում եք Ինձ ամեն օր, ասեք այս աղոթքը»․

Ով իմ թանկագին Հիսուս, գրկիր ինձ Քո Բազուկների մեջ և թույլ տուր որ գլուխս հանգստանա Քո Ուսերին, որպեսզի կարողանաս ինձ վեր բարձրացնել Քո Փառապանծ Թագավորություն, երբ ժամանակը գա:

Թույլ տուր Քո Թանկագին Արյունը հոսի իմ սրտի վրա, որպեսզի մենք կարողանանք միավորվել որպես մեկ:

Ամեն:

## Աղոթք՝ Աստծո Սուրբ Կամքին հանձնվելու համար

Հիսուս, ամեն ինչ, որ ես ասում եմ և անում, Քո Սուրբ Կամքին համապատասխան է, վարվիր ինձ հետ Աստծո Կամքին համապատասխան:

Ամեն:

## Աղոթք Սիրո, խոնարհության և Աստծո Կամքին հետևելու համար

Հիսուս, ես արժանի չեմ կանգնելու Քո առջև, բայց արա ինձ հետ ինչպես Դու ես կամենում, քանի որ ես կանեմ այնպես, ինչպես Դու ես ցանկանում:

Ամեն:

## Աղոթք Ներհայեցողության, Դիմացկունության, Համբերության և Սիրո Ընծաների համար

Հիսուս, տուր ինձ Ընծաները, որոնց կարիքն ունեմ Քեզ հավատարիմ մնալու համար:

Ամեն:

## Մարդկությանը փրկելու Իմ Առաքելությունը գրեթե ավարտված է

«Մարդկությանը փրկելու Իմ Առաքելությունը գրեթե ավարտված է: Իմ Մնացորդը ձևավորված է: Ձեզ տրվել են Կենդանի Աստծո Կնիքի, Փրկության Մեդալիոնի և Խաչակրաց Աղոթքների Ընծաները: Դրանք կլինեն ձեր սպառազինությունը Իմ հակառակորդի դեմ»:

Ձեր սիրող Հիսուս
Ողջ մարդկության Փրկիչ և Ազատարար

(Ուրբաթ, 13 փետրվարի, 2015թ., ժ. 18:00)